ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 338-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 1/32.1/18205-15 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Միհր Եղիազարյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

2) ***Ռուբեն Շբոյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Կոտայքի անասնաբուժասանիտարիայի և սննդի անվտանգության մարզային կենտրոնի տնօրեն *(համաձայնությամբ)*,

3) ***Վահագն Դավթյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության պետ *(համաձայնությամբ)*,

4) ***Արտակ Խաչատրյան*** - անդամ, Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի տնօրեն (*համաձայնությամբ)*,

5) ***Արմենուհի Հարությունյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ *(համաձայնությամբ)*,

6) ***Էմիրա Աֆյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ *(համաձայնությամբ)*,

7) ***Կարինե Ավագյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ *(համաձայնությամբ)*:

2. Առաջարկել՝

1) համայնքների ղեկավարներին՝ տեղերում ստեղծել հանձնաժողովներ և անձնական պատասխանատվությամբ ապահովել գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը և հաշվետվությունները տարածքային վիճակագրական համապատասխան վարչությանը սահմանված ժամկետում առաքումը,

2) մարզային վիճակագրական վարչությանը՝ (պետ Վ. Դավթյան) համայնքներին ապահովել անասնագլխաքանակի հաշվառման համար անհրաժեշտ քանակի հաշվետվության ձևերով, տրամադրել համապատասխան մեթոդական ցուցումներ և ամփոփ տվյալները սահմանված ժամկետում ներկայացնել վերադաս կազմակերպություններին:

3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել համապատասխան համայնքի ղեկավարին;

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Հ. Հայրապետյանի* վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ՖՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18
ք. Հրազդան